


Ե Ր Է Կ



Ա Յ Ս Օ Ր



Մարտիրոս Մարտիրեան

## ԶՕՆ ՔԵՍԱՊԻՆ

Մեր սրտէն բխած, քեզ՝ ցաւի նուագ...  
Կիլիկեան աշխարհի վերջին տուն, Քեսապ.  
Նետ՝ լեռ Մուսայի, քու քոյր անցեալի,  
Եղաք աշխարհի չար ձեռքերու զոհեր.  
Տեղահան, գաղթական, անօթեան...

Ո՞ր էք, տէր աստուածներ՝ աշխարհի մարդերու...  
Անկարող դարձած կուռքեր, պաշտօնական հրեշտակներու,  
Կարծեցեալ պաշտօնականներ՝ տանջուածներու...



Նոգեշունչ մաղթանք, մնաս անսասան,  
Քաջասիրտ մայրերու արծուատուն վեհ Քեսապ.  
Քեզ վաղ պիտ՝ կանչեն, ծաղկուն հովիտներ,  
Նամայն հայութեան աշխատանքով սնուած՝  
Պիտ՝ ելլես, և կերտես դուն նորոգուած:



Ո՞ր է արդարութիւն Միացեալ Ազգերու,  
Պաճուճած սին հմայքով լոկ խոստումներու.  
Ո՞ր են ազգերու տէրեր, որպէս սուտ խօսքերու  
Մնապարծ փողհարներ, լոկ փշելու...

Դարձեա՛լ պիտ՝ յառնես, միշտ կանաչ մեր Քեսապ:

Մայիս 2014